ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/34 Հ»

ք. Երևան 19 նոյեմբերի 2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մկրտչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Երանգ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Դոգուզովի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևանի N 120 մանկապարտեզի հիմնանորոգման** աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **3 498 000 (Երեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն, **որից 2015 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսված գումարը կազմում է 126 400 (Մեկ հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ /այսուհետ պայմանագրային գումար/:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Մինչև 15.12.2015թ. պայմանագրային գումարի չիրացված մասը ամբողջությամբ՝ 2015թ. դեկտեմբեր ամսվա երրորդ շաբաթվա ընթացքում համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 3 498 000 (Երեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Ծառայության մնացած մասը կմատուցվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա

վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	<<Երանգ>> ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նժդեհ 7/33
ՀՀ ՖՆ աշխատակազմի	<<Յունիբանկ>> ՓԲԸ <<Գյումրի>> մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 24103001312200
Հ/Հ 900011002558	ՀՎՀՀ 05507067
ՀՎՀՀ 02565827	

Աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝

Ա. Մկրտչյան (մատրագրություն)

Տնօրեն Ա. Դոլոնցով (մատրագրություն)

Հավելված 1
19 11.2015 թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ-15/34 Հ
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևանի N 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման

1.	**Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման բնութագիրը**
	Շինմոնտաժային աշխատանքների իրագործման բոլոր փուլերում դրանց նկատմամբ հեղինակային հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 143՝ «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացում» հրամանով հաստատված:
2.	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Հեղինակային հսկողության իրականացում համաձայն հաստատված նախագծի:
3.	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն:
	Հսկողության միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված պահանջներին ու նախագծային լուծումներին:
	Հսկողության միջոցով շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում նախագծային լուծումներին առնչվող խնդիրների բացահայտման, անհրաժեշտ լուծումների և Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման ապահովում:
	Շինարարության վարման ընդհանուր մատյանում նախագծային լուծումների փոփոխությունների, լրացումների և շեղումների վերաբերյալ գրառումների ու Պատվիրատուի հետ պարտադիր համաձայնեցման և/կամ տեղեկացման ապահովում:
	Ծառայության մատուցման ապահովում պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Պատվիրատուի հատուկ կանչով:
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում:
	Հսկողության արդյունքներով ամենամսյա հաշվետվությունների ներկայացում:
4.	**Ծառայության մատուցման ժամկետը**

	սկիզբը	**ավարտը**
	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011002558
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ
<<Երանգ>> ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նժդեհ 7/33
<<Յունիբանկ>> ՓԲԸ <<Գյումրի>> մ/ճ
Հ/Հ 24103001312200
ՀՎՀՀ 05507067

Աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Ա. Մկրտչյան _____ (ստորագրություն)
Կ.Տ

Տիգրան Ա. Դոգուզով _____ (ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
19 11.2015 թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ-15/34Հ
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Երևանի N 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն				-	-	-	-	-	-	-	126 400	126 400	126 400

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011002558
ՀՎՀՀ 02565827

ԿԱՏԱՐՈՂ
<<Երանգ>> ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ.Նժդեհ 7/33
<<Յունիբանկ>> ՓԲԸ <<Գյումրի>> մ/ճ
Հ/Հ 24103001312200
ՀՎՀՀ 05507067

Աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր
պաշտոնակատար՝

Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ

Տնօրեն Ա. Թոքմաջյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
19 11.2015 թ. կնքված N « ԲԸԱՀԾՁԲ-15/34 Հ»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս

_____ *և*

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
19 11.2015 թ. կնքված N ԲԸԱՀԾՁԲ-15/34 Հ
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
---
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

/19.11.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/34Հ պայմանագրի/

ք. Երևան <<02>> 05 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Սվետլանա Դոգուզովա Վլադիմիրի>> ԱՁ-ն, ի դեմս Ս. Դոգուզովայի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության և <<Երանգ>> ՍՊԸ-ի միջև 19.11.2015 թ. կնքված ծառայության մատուցման N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/34Հ պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, ինչպես նաև <<Երանգ>> ՍՊԸ-ի կողմից <<Սվետլանա Դոգուզովա Վլադիմիրի>> ԱՁ-ին 31.03.2017թ. տրված լիազորագիրը (կցվում է), փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել 58 900 (հիսունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 19.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/34Հ ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011849, ՀՎՀՀ 02565827	<<Սվետլանա Դոգուզովա Վլադիմիրի>> ԱՁ ք.Գյումրի, Աղյուսի փող. 17 <<Յունիբանկ>> ԲԲԸ <<Գյումրի>>մասնաճյուղ Հ/Հ 24103016547600 ՀՎՀՀ 57311285
Աշխատակազմի ղեկավար _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն)	_____ Ս. Դոգուզովա (ստորագրություն)

Հավելված թիվ 1
19.11.2015 թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/34Հ պայմանագրի
N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Երևանի թիվ 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություն	-	-	-	29 500	29 500	29 500	58 900	58 900	58 900	58 900	58 900	58 900	58 900

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության
հրապարակ, կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011849, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<Սվետլանա Դոգուզովա Վլադիմիրի>> ԱՁ
ք.Գյումրի, Աղյուսի փող. 17
<<Յունիբանկ>> ԲԲԸ
<<Գյումրի>>մասնաճյուղ
Հ/Հ 24103016547600
ՀՎՀՀ 57311285

_____ Դոգուզովա
(ստորագրություն)

Կ.Տ.

Նոտարական ակտի կոդ: 604-20170331-90-1118577
Նոտարական ակտի գաղտնագիր: 1R5FBF

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք. Գյումրի, ՀԱՅԱՍՏԱՆ , երկու հազար տասնյոթ թվականի մարտի երեսունմեկ
31/03/2017

Ես՝ <<ԵՐԱՆԳ>> ՍՊԸ -ի տնօրեն՝ ԱՆԱՏՈԼԻ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴՈԳՈՒԶՈՎ ծնված՝ 18/06/1953թ., անձնագիր՝ 001016906 տրված 016-ի կողմից 01/02/2013-ին, ՀԾՀ՝ 2814530097, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ., 3 Շ, 53ԲՆ *ՍՈՒՅՆ ԼԻԱԶՈՐԱԳՐՈՎ ԼԻԱԶՈՐՈՒՄ ԵՄ՝ Ս/Զ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴՈԳՈՒԶՈՎԱՅԻՆ ծնված՝ 11/07/1951թ., անձնագիր՝ AF0713656 տրված 016-ի կողմից 02/05/2003-ին, ՀԾՀ՝ 6107510325, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ՍՊԵՆԴԻԱՐԻ Փ., 17 Տ / անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 02.05.2018թ., 016-ից, /*

ստորագրելու և կնքելու Պետության կարիքների համար հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր , այդ թվում նշված պայմանագրի շրջանակներում լիազորում եմ կնքել ցանկացած տիպի համաձայնագիր երևանի թիվ 120 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցում և երևանի հենաշարժային համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցում իրականացնելու վերաբերյալ ստորագրելու իմ փոխարեն բոլոր պահանջվող փաստաթղթերը , պայմանագրերը , և կատարելու բոլոր գործողությունները կապված սույն ծառայությունները իրականացնելու հետ:

Ես վկայում եմ , որ գործունակության մեջ սահմանափակված չեմ, իմ նկատմամբ չկա սահմանված խնամակալություն և հոգաբարձություն : Լիազորագիրը տրված է իմ կողմից կամավոր:

ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ ՏՐՎՈՒՄ Է 3/ԵՐԵՔ/ ՏԱՐԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ:

ԼԻԱԶՈՐՈՂ 1. Սվետլանա Դոգուզով

երկու հազար տասնյոթ թվականի մարտի երեսունմեկ 31/03/2017

Սույն լիազորագիրը հաստատված է իմ՝ Գյումրի նոտարական տարածքի նոտար՝ ՈՌԲԵՐՏ ՏՈՒՆԿԻ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ կողմից: <<ԵՐԱՆԳ>> ՍՊԸ -ի տնօրեն՝ ԱՆԱՏՈԼԻ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԴՈԳՈՒԶՈՎԸ լիազորագիրը ստորագրեց իմ ներկայությամբ: Լիազորագրողի ինքնությունը, գործունակությունը ստուգված է: ԳՐԱՆՑՎԱԾ Է ՄԵՂՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 1373

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ համաձայն՝ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Ռոբերտ Տունկի Մուկուչյան